ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ԾԱԾԿԱԳՐՈՎԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 29-ը մայիսի 2019թ.
ժամը 11^{30}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Շլեպչյան,
Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

1.2 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքերի.

«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1)-ում բացակայում է ապրանքի չափերի վերաբերյալ տվյալները, որոնք սահմանված էին ընթացակարգի հրավերով:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով **«Սեմանգ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ բացակայում է ընթացակարգի հրավերով պահանջվող **մասնագիտական փորձառություն** որակավորման չափանիշը հավաստող հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1)-ում բացակայում է ապրանքի չափերի վերաբերյալ տվյալները, որոնք սահմանված էին ընթացակարգի հրավերով:

«Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1)-ում բացակայում են ապրանքների չափերի վերաբերյալ տվյալները, որոնք սահմանված էին ընթացակարգի հրավերով:

«Ջետտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրության արդյունքում պարզվել էր, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Ներկայացված ապրանքների մատակարարման հարկային հաշիվներում նշված չեն պայմանագրերի համարները, ինչը հանձնաժողովին հնարավորություն չի տալիս պարզելու արդյո՞ք տվյալ հաշիվ-ապրանքագրերը կազմվել են ներկայացված պայմանագրերի շրջանակներում կատարված մատակարարումների հիման վրա:

Քանի որ որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված 29.01.2019թ. կնքված ՆԱԱ-4/2019 և ՆԱԳ-2/2019 պայմանագրերում գնման առարկաները նշված են ընդհանուր ձևով, իսկ կոնկրետ մատակարարված ապրանքատեսակները ներկայացված են հաշիվ-ապրանքագրերում (եթե ընդունենք, որ դրանք կազմվել են նշված պայմանագրերի շրջանակներում), ուստի մատակարարված ապրանքների նմանատիպությունը գնահատելիս գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել հաշիվ-ապրանքագրերում նշված ապրանքների անվանումները, որոնք իրենցից ներկայացնում են միայն գրասենյակային նյութեր, ինչը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ ընթացակարգի հրավերով «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար, որպես նմանատիպ են սահմանվել **գնման առարկա հանդիսացող և /կամ/ գրասենյակային գույքի և /կամ/ կենցաղային կահույքի** մատակարարման պայմանագրերը», այնինչ **«Ջետտա» ՍՊԸ**-ի կողմից, որպես նմանատիպ ներկայացվել է «Գրասենյակային նյութեր» մատակարարման պայմանագիր:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1)-ում բացակայում ենապրանքի չափերի վերաբերյալ տվյալները, որոնք սահմանված էին ընթացակարգի հրավերով:

«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջող փաստաթղթերում բացակայում են ընթացակարգի հրավերով պահանջվող **մասնագիտական փորձառություն** որակավորման չափանիշը հավաստող հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«Օլանդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 6.1)-ում բացակայում են ապրանքների չափերի վերաբերյալ տվյալները, որոնք սահմանված էին ընթացակարգի հրավերով:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից ներկայացված շտկումները հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Շլեպչյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Մաղաքյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 07-ը հունիսի 2019թ.
Ժամը 12^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Շլեպչյան,
Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների կողմից ներկայացված շտկումների քննարկման մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Մասնակիցների կողմից ներկայացված շտկումների քննարկման մասին

(Ա. Մաղաքյան)

1. «**Հայր և որդի Գյոդակյաններ», «Սեմանգ» «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ», «Տեխնո Սիթի», «Օլանդա», «Ֆոտոն» ՍՊԸ-ների** կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվեցին առկա անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **մասնակիցների** կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող որակավորման փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը գնահատել գնանշման հրավերի պահանջներին համապատասխան.

1.2 «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի կողմից 29.05.2019թ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու առաջարկին ի պատասխան՝ ընկերության տնօրենի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին ներկայացվեց գրություն (կցվում է), որով վերջինս պնդում էր իր դիրքորոշումն առ այն, որ հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» չափանիշին «Ջետտա» ՍՊԸ-ի համապատասխանությունն հավաստող և իր կողմից ներկայացված փաստաթղթերը բավարար են և դրանք շտկելու անհրաժեշտությունը բացակայում է: Քննարկելով մասնակցի գրությունը և կրկնակի ուսումնասիրելով «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը՝ գնահատող հանձնաժողով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, որոշեց «Ջետտա» ՍՊԸ-ի ներկայացված «Մասնագիտական փորձառություն» չափանիշին իր համապատասխանությունն հավաստող որակավորման փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել վերջինիս հայտը՝ հետևյալ հիմնավորմամբ. ընթացակարգի հրավերով «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար, որպես նմանատիպ են սահմանվել գնման առարկա հանդիսացող և /կամ/ գրասենյակային գույքի և /կամ/ կենցաղային կահույքի մատակարարման պայմանագրերը», այնինչ «Ջետտա» ՍՊԸ-ի կողմից, որպես նմանատիպ ներկայացվել են «Գրասենյակային նյութերի» մատակարարման պայմանագրեր, ընդ որում պայմանագրերի նմանատիպության հարցը քննարկելիս հանձնաժողովն առաջնորդվել է ոչ թե ներկայացված պայմանագրերի (29.01.2019թ. կնքված N ԱԱ-4/2019 և N ԱԳ-2/2019) վերնագրերով կամ դրանց մեջ առկա ընդհանուր բնորոշումներով, այլ հաշիվ-ապրանքագրերում նշված կոնկրետ ապրանքների անվանումներով, այսինքն տեխնիկական բնութագրերի առանձնահատկություններով պայմանավորված, չափորոշիչները փոխկապակցված չեն գնման առարկայի հետ:

Հանձնաժողովը որոշեց «Ջետտա» ՍՊԸ-ի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

1.3 «**Ջետտա» ՍՊԸ-ի** մերժման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցնող մասնակցին՝ **«Օլանդա» ՍՊԸ-ին:**

1.4 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և **«Օլանդա» ՍՊԸ-ին** առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/22» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել **«Օլանդա» ՍՊԸ-ի** կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ա. Շլեպչյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Մաղաքյան